Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի

Ռեկտոր՝_____ Ն.Սարիբեկյան

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ

Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի 2020-2025 թվականների երկարաժամկետ պլանավորման կարճաժամկետ գործողությունների՝ 2021-2022 ուստարվա ժամանակահատվածում իրականացրած գործունեության հիման վրա կազմվել է ներքոնշյալ կատարողական զեկույցը:

Զեկույցում ներկայացված աշխատանքները ապահովել են ԱԲՀ ռազմավարական ծրագրի գերակայությունները՝ 7 չափանիշներին համապատասխան:

Ներկայացնենք ըստ այդ չափանիշների կատարված աշխատանքները, որոնք իրականացվել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ կամ ուղղորդմամբ: ՈԱ առաջատար մասնագետը, ըստ ԱԲՀ պաշտոնի անձնագրի, մասնակցել է որակի ապահովման գործընթացներին, պրոռեկտորի հանձնարարությամբ համալսարանի ընթացիկ գործունեության պլանավորման և պարտականություններով սահմանված աշխատանքներին:

Հաշվետու տարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը համագործակցել են ԱԲՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ, իրականացնել որակի շարունակական բարելավմանն ուղղված փաստաթղթերի համալրում և վերանայում, տրամադրել խորհրդատվական բազմաբնույթ ծառայություններ, կատարել հարցումներ և վերլուծություններ, ներկայացրել առաջարկություններ՝ նպաստելով համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի մշակույթի զարգացմանը:

I. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Կարևորելով ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը ԱԲՀ-ում՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կրթության որակի բարելավման աշխատանքները: Այսպես, Համալսարանի կառավարման գործընթացում կարևորելով նրա վրա ազդող առանցքային գործոնների վերհանումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը, 2020-2021 ուստարում ԱԲՀ ՌՋ-ից բխող և ՈԱ և ԿԲ պրոռեկտորի աշխատանքային պլանով նախատեսված գործողություն 1-ի շրջանակում՝ «*Ներդնել ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման պարբերաբար իրականացվող հստակ մեխանիզմներով և չափելի գործիքներով ամբողջական համակարգ*», շարունակվել են արտաքին գործոնների ուսումնասիրությունների և ԱԲՀ գիտական խորհրդի նիստերի որոշումների հիման վրա իրականացվել կոնկրետ աշխատանքներ:

ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին գործոնների բացահայտման առումով քայլեր միշտ են ձեռնարկվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանց բարելավման ուղղությամբ հնարավորությունները առավել կառավարելի են՝ ի տարբերություն արտաքին գործոնների: Օրինակ՝ ընդունելության կարգով պայմանավորված ՀՀ քաղաքացի-դիմորդների թիվը տարիների ընթացքում ոչ միայն նվազել էր, այլև վերջին մի քանի տարիների ընթացքում ԱԲՀ-ում սովորել են բացառապես օտարերկրյա ուսանողներ, հայ ուսանողների կողմից դիմումներ չեն ընդունվել ո՛չ հայալեզու, ո՛չ անգլալեզու դասընթացների համար: 2021-2022 ուստարում Համալսարանում ՀՀ քաղաքացիների ընդունելություն ևս չի կազմակերպվել՝ դիմորդների նվազագույն թվով պայմանավորված:

Այնուամենայնիվ, հաշվետու ժամանակահատվածի համար կարող ենք առանձնացնել արտաքին և ներքին գործոններով պայմանավորված հետևյալ միջոցառումները, որոնք իրականացվել են ԱԲՀ ԳԽ նիստերի համապատասխան որոշումների հիման վրա: Այսպես՝

- 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ԱԲՀ են դիմել Սուրբ Թերեզա բժշկական համալսարանից (ԿԳՄՍՆ-ի կողմից համալսարանին լիզենզիայից զրկելու հետևանքով գործունեությունը դադարեցվել էր) ազատված մի խումբ հայ և օտարերկրյա ուսանողներ: Համալսարանի ղեկավարության ջանքերի շնորհիվ խնդրին օպերատիվ լուծում տրվեց՝ ԱԲՀ դիմած ուսանողների ընդունելությունը/տեղափոխումը գործող կարգերին համապատասխան կազմակերպելու և իրականացնելու նպատակով, որի արդյունքում ԱԲՀ-ում սովորող ուսանողների թիվը դարձավ՝ 497, աճեց մոտ 18%-ով: Հատկապես ուրախալի է այն, որ ՀՀ քաղաքացիները համալրեցին Ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների թիվը (4-րդ կուրս):

Այսինքն, համալսարանը կարողացավ խելամիտ ժամկետներում արտաքին գործոններով պայմանավորված խնդիրը կարգավորել, օգտագործել իր ներքին ռեսուրսները՝ հօգուտ և՛ ԱԲՀ դիմած ուսանողների և՛ համալսարանի:

(Հիմք՝ ձևավորված հանձնաժողովի հրամանը և այլ հրամաններ)

- Հաջորդ քայլը՝ ըստ ԳԽ որոշման, ԱԲՀ-ի 2020-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագրի կատարողականի գնահատումն էր ըստ ԳԱՑ-երի:

(Հիմք՝ ԳԱՑ-երի գնահատում):

- ԳԽ հաջորդ որոշումը՝ որպես հիմք բարելավման գործողությունների, վերաբերում է միջազգայնացման քաղաքականությանը՝ պլանավորված գործողություններով և ակնկալվող արդյունքներով, որն արտացոլված է ԱԲՀ 2020-2025 թթ. ՌԾ-ում և ներկայացվում է արտաքին կապերի բաժնի տարեկան հաշվետվությամբ:
- Բարելավման քայլերից մեկը, որը նույնպես ԳԽ նիստի որոշումներից է, մատուցված կրթական ծառայությունների որակի ճանաչումն է միջազգային աշխատաշուկայում: Օգտվելով բուհի մարքետինգը ներկայացնող արտաքին գործակալության ծառայություններից (օրինակ՝ Campus international-ը)՝ իրականացվել են որոշ միջոցառումներ: 2022 թ. հունիս ամսին ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի և Արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ մի քանի հանդիպումների և քննարկումների արդյունքում կնքվել է եռակողմ համագործակցության պայմանագիր, որի շնորհիվ հնդիկ ուսանողների համար նախատեսված Հնդկաստանի Հանրապետության արտասահմանյան բժշկական շրջանավարտների համար պարտադիր քննության (Foreign Medical Graduates Examination) նախապատրաստական դասընթացների իրականացման նպատակով «Next Learning Center» (NLC) կենտրոնը «Ավանդական բժշկության համալսարան»-ի «Բուժական գործ» մասնագիտության չորրորդ, հինգերորդ և վեցերորդ կուրսերի ուսանողների համար կազմակերպելու և անցկացնելու է վերապատրաստման դասընթացներ:
- Հաջորդ քայլը, որը նույնպես ԳԽ որոշումից էր բխում, ուսումնական մասի վարիչի և ֆակուլտետի դեկանի կողմից շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ուսումնական գործընթացում նրանց ներգրավման միջոցառումներն են: Ուսումնական մասի վարիչը, որը միաժամանակ իրականացնում է նաև շրջանավարտների կարիերայի հետ կապված գործառույթներ, մշտապես համալրում և թարմացնում է շրջանավարտների զբաղվածության բազան, իսկ ինչ վերաբերում է ուսումնական գործընթացներում նրանց ներգրավվածությանը, այս հարցում պասիվություն է դրսևորվել:

Գործողություն 2. Բուհը կարևորում է ԱԲՀ «Ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգ»-ի կիրառումը, որը հնարավորություն է ընձեռում ԱԲՀ-ին իրականացնել նպատակային միջոցառումներ: Ըստ վերոնշյալ ընթացակարգի ռիսկերը նկարագրվում են 3 ոլորտում՝ գիտահետազոտական գործունեություն, բարձրագույն կրթության կազմակերպում և ֆինանսական գործառույթներ:

Գիտահետազոտական գործունեություն

- Ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատումը (*ՄՈՒՀ-ը չի խթանում ՊԴ կազմի գիտամեթոդական գործունեությունը և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար պայմանների բարելավումը, ուսանողների մասնակցությունը գիտա-հետազոտական աշխատանքներին)* նպաստեց գիտահետազոտական գործունեություն ոլորտում բուհի ուշադրության առավել կենտրոնացմանը: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգվել են հիմնականում ԱԲՀ Գիտական մասի կողմից:

(Հիմք՝ գիտական մասի տարեկան հաշվետվություն):

Բարձրագույն կրթության կազմակերպում

- Ինչպես նշվել է արտաքին փորձագետների կողմից, մրցակցային պայմաններում միջազգային ուսանողների հավաքագրումը, միջնորդավորված լինելով արտաքին գործակալությունների կողմից, ռիսկեր էր պարունակում: Ինչևէ, միջազգայնացումը՝ որպես բուհի կայուն զարգացման հենք, բուհի կառավարման օղակների ուշադրության կենտրոնում է: Համալսարանի մարքետինգի, միջազգային աշխատաշուկայում այն պաշտոնապես ներկայացնելու նպատակով բուհի ղեկավարությունը ընդգրկված է մի շարք միջոցառումներում, ինչպիսիք են գործող համագործակցության պայմանագրերի շրջանակում հանդիպումները քոլեջների, համալսարանների ղեկավարների, ուսանողների հետ, ապագա դիմորդների շրջայցերը համալսարան:

  Բուհի մարքեթինգային նյութերը լայն լսարաններին պաշտոնապես ներկայացնելու, ուսանողների հոսքը խթանելու, բուհի գրավչությունը բարձրացնելու համար ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը մշտապես համագործակցել են ԱԲՀ պաշտոնական կայքի պատասխանատուի հետ, որի կողմից առաջարկվել է ներդնել SEO, SMM սոցիալական մեդիայի հարթակում կիրառվող գործիքները:
- Մեկ այլ ռիսկային համարվող խնդիր շտկվել է մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման արդյունքում, որը մանրամասն ներկայացված է ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի հաշվետվություններում:
- Բարձրագույն կրթության կազմակերպման հետ կապված տարբեր գործընթացների գնահատումների և մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեքությունը նույնպես ռիսկային կարող էր դառնալ համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության և շարունակական զարգացման համար: Հետևաբար, ԱԲՀ-ում աստիճանաբար ձևավորվեց վերլուծություններ իրականացնելու մշակույթը: Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես նաև վերջին 3 տարիների ընթացքում իրականացվել են ներքին գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն կապված ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների, ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների, ամբիոնների գործունեության, ԳԱՑ-երի գնահատման հետ:

Ֆինանսական գործառույթները

- Ֆինանսական գործառույթները ռիսկային են դիտվել 2019թ. ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ՝ նկատի ունենալով համալսարանի բյուջեի ֆինանսական մեկ աղբյուրից համալրումը: Ռազմավարական ծրագրին համապատասխան ռազմավարական նպատակների իրականացման վտանգից խուսափելու համար մշակվել է ֆինանսների բաշխման քաղաքականություն՝ ապահովելու համար գործընթացների նպատակայնությունը:

<u>(Հիմք՝ Համալսարանի 2021-2022թթ տարեկան բյուջեն):</u>

Գործողություն 3. Վերանայել վարչարարության ՈԱ մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում 2020-2021 ուստարվա ամբիոնների կատարողական զեկույցները (հաշվետվությունները) վերլուծվել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից,

քննարկվել ԳԽ-ում և ներկայացվել հստակ հանձնարարականներ ամբիոնների գործունեության բարելավման նպատակով: Կազմակերպվել է ամբիոնների 3 տարվա գործունեության մշտադիտարկում, ուսումնասիրվել են ամբիոնների 3 տարվա փաստաթղթերը և կատարած աշխատանքները: Հանձնաժողովի անդամներն ի մի են բերել հավաքագրված տեղեկատվությունը, կատարել համապատասխան հետևություններ, զեկուցել ԱԲՀ ԳԽ-ի նիստին և ներկայացրել բարելավման առաջարկներ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ և ԿԲ աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ և ՄՌԿ և ընդհանուր բաժնի օժանդակությամբ 2021-2022 ուստարվա ավարտին կազմակերպվեցին անգլերենի վերապատրաստման դասընթացներ: ԱԲՀ-ի դասախոսները, վարչական աշխատակիցները բարելավեցին իրենց անգլերենի իմացությունը «Բաբելոն» ուսումնական կենտրոնի մասնագետների շնորհիվ:

Գործողություն 3. Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները՝ իրազեկելով ներքին բոլոր շահակիցներին:

Նախորդ ուստարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից անցկացվեցին կրեդիտային համակարգի վերաբերյալ սեմինարներ՝ դասախոսներին իրազեկելու և առարկայական ծրագրերի վերանայմանը նախապատրաստելու նպատակով: Համալսարանում նոր ընդունված դասախոսների համար ուսումնական տարվա սկզբին ևս կազմակերպվում են հանդիպումներ ՈԱ մասնագետի, դեկանի հետ և ներկայացվում են կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները, ինչպես նաև Համալսարանում գործող ուսանողների գիտելիքների գնահատման քաղաքականությունը:

Գործողություն 4. Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կայուն մեխանիզմներ՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի՝ ընդլայնելով ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների (վերա) մշակման գործընթացներում:

ՄԿԾ-ի մշտադիտարկման նպատակով հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում շրջանավարտների շրջանում ստացած կրթությունից, կրթական ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները, ամփոփիչ ատեստավորման հաշվետվություններում ներկայացված բարելավման առաջարկությունները, դասալսումների քննարկումները և այլն:

Գործողություն 5. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:

Բենչմարքինգի իրականացման քաղաքականության համաձայն ԱԲՀ-ն պատրաստվում է իրականացնել ստորաբաժանումների բենչմարքինգ՝ հաշվի առնելով ամբիոնների մշտադիտարկման արդյունքները:

Գործողություն 6. Ներդնել ուսանողների պորտֆոլիոն որպես գնահատման միջոց՝ պարբերաբար մշտադիտարկելով ուսանողների ձեռքբերած հմտությունները և ուսումնառության ընթացքում առկա խնդիրները:

Մասնագիտական ամբիոնների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում, որպես ուսանողների գնահատման միջոց, մշակվել է պրակտիկաների պորտֆոլիոն, որը ներդրվել է 2021-2022 ուստարվա ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների համար: Այս աշխատանքների նպատակայնությանը աջակցել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ մասնագետը՝ պորտֆոլիոյի կազմման աշխատանքային խմբին տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն և աշխատանքային նյութեր: Թղթապանակի կիրառման արդյունավետությունը կգնահատվի պրակտիկայի արդյունքներն ամփոփելիս:

Գործողություն 7. Բարելավել ավարտական ատեստավորման քննությունները՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ցուցադրելու ձեռքի հմտությունները:

Հաշվետու ժամանակահատվածում կոնկրետ բարելավման քայլեր են արվել ամփոփիչ ատեստավորման արդյունքների բարելավման համար, որում համոզվելու համար ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորն անձամբ է ներկա գտնվել քննություններին:

Գործողություն 8. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում դասալսումները և քննարկումները իրականացվել են գործող նոր կարգի հիման վրա: Ամբիոնների կողմից ներկայացված դասալսումների արդյունքները ներկայացվել ԱԲՀ-ի գիտական խորհրդի քննարկմանը 2021-2022 ուստարվա ավարտին: Այս գործընթացը պահանջում է պարբերականություն, իսկ արդյունքների վերլուծությունը հնարավորություն կընձեռի համալսարանի ղեկավարությանը ճիշտ պլանավորել գալիք տարվա ուսումնական գործընթացը:

Գործողություն 9. Ստեղծել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման մեխանիզմներ և տրամադրել համապատասխան ֆինանսական հատկացումներ:

Դասախոսների վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման ուղղությամբ հաշվետու տարում համալսարանի կողմից կոնկրետ քայլեր չեն արվել, բացի անգլերենի վերապատրաստման դասընթացների կազմակերպումից:

Գործողություն 10. Ընդլայնել համագործակցությունը տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր:

Համագործակցության աշխատանքներ են ընթանում տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ: ԱԲՀ-ի և Բելառուսի Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակում կազմակերպվել են փոխադարձ դասախոսություններ:

Կազմակերպչական աշխատանքներում ուսումնական մասի վարիչին աջակցություն է ցուցաբերվել ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից:

Գործողություն 11. Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ:

Դիմորդների հավաքագրման աշխատանքներին անմիջական մասնակցություն ունի ԱԲՀ-ի արտաքին կապերի բաժինը: Օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ իրականացվում են տարբեր միջոցառումներ, մասնավորապես՝ Համալսարանի գործընկերների հետ համատեղ դիտարկվող ժամանակահատվածում նկարահանվել է ԱԲՀ-ի գործունեության 30-ամյակին նվիրված ճանաչողական տեսահոլովակ, տպագրվել են տեղեկատվական բուկլետներ: Համագործակցող գործընկերները արտասահմանում կազմակերպում են տարատեսակ միջոցառումներ (հանդիպումներ պոտենցիալ դիմորդների հետ, տեսահոլովակների ցուցադրություններ և բացատրական աշխատանքներ): Չնայած նրան, որ գովազդային նյութերը հիմնականում պատրաստվում են արտաքին գործակալությունների, հատկապես՝ Campus International-ի կողմից, այնուամենայիվ, հաշվի են առնվում համալսարանի աշխատակիցների առաջարկները, նրանց կարծիքը:

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործողություն 1. Բարելավել ԱԲՀ գրադարանային ֆոնդը՝ ֆինանսական միջոցներ հատկացնելով անգլալեզու մասնագիտական գրականության ձեռքբերմանը:

Թվային գրադարանների ասոցիացիաների հետ կնքված պայմանագրի համաձայն գրադարանային ֆոնդը շարունակում է բարելավվել արտասահմանյան մասնագիտական և ոչ մասնագիտական գրականությամբ: ՈԱ առաջատար մասնագետի և ուսումնական մասի կողմից 2021-2022 ուստարում անցկացվել են կրթական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության առցանց հարցումներ, որտեղ ներառվել են գրադարանի սպասարկումից, մասնագիտական գրականության առկայությունից և հասանելիությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցեր:

Գործողություն 2. Կատարելագործել ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը՝ ներդնելով միասնական էլեկտրոնային համակարգ:

ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: ԱԲՀ-ն իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն պաշտոնական էլ. հասցեի՝ info@utm.am-ի միջոցով, ներքին շրջանառությունը՝ Sharing թղթապանակի և աշխատակիցների էլ. հասցեների օգնությամբ:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ընթացիկ ուստարում պատասխանել է մոտ 40 մտից գրությունների, որոնք մակագրվել են իրեն ԱԲՀ ռեկտորի կողմից:

Նշենք, որ ԱԲՀ-ն 2021-2022 ուստարվանից ՄԿԿՏՀ ծրագրի միջոցով ինստիտուցիոնալ տվյալների, ՏՀՏ հագեցվածության, ֆինանսական ռեսուրսների կառավարման, ՄԿԾ-ների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, քննաշրջանի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրման և պահպանման համար պատասխանատու է ՈԱ առաջատար մասնագետը, որը համագործակցում է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ԿԿՏՀ-ի գլխավոր ադմինիստրատորի) հետ՝ համալսարանի տվյալները պատշաճ հավաքագրելու և ներբեռնելու համար:

Համալսարանում առաջնահերթ են համարվում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները: Գնահատման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով

շարունակվում է «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագրի կիրառումը, որը ոչ միայն մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան, (ներառում է ուսպլանները՝ ըստ կրթական ծրագրերի, ուսանողների, շրջանավարտների անձնական տվյալները, առաջադիմությունը, ստուգարքային և քննական տեղեկագրերը, ակադեմիական տեղեկագրերը), այլև ապահովում է օբյեկտիվ և թափանցիկ գործընթաց: Կիսամյակից կիսամյակ ծրագիրը համալրվում է ուսանողների գնահատականներով՝ կիսամյակային, տարեկան, արդյունարար ՄՈԳ-ի ավտոմատ հաշվարկով, իսկ տվյալներն օգտագործվում են ուսման վարձերի զեղչման, ռոտացիայի, ակադեմիական տեղեկագրերի տրամադրման ժամանակ:

Գործողություն 3. Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմները՝ շարունակաբար վերլուծելով արդյունքները և պլանավորելով համապատասխան բարելավումներ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բարելավման աշխատանքներ իրականացվում են պարբերաբար: Ընթացիկ ուստարում տնտեսական մասի վարիչի կողմից կատարվել է առկա ռեսուրսների հաշվառում և զեկուցվել ռեկտորատի նիստում:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 1.2. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը ԱԲՀ-ի կառավարմանը: Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում:

Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողներն ունեն իրենց կայուն տեղն ու դիրքը: 2021-2022 ուստարում ԱԲՀ-ի ղեկավարությունը, հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների խնդրանք-դիմումը, որը մասնավորապես վերաբերում էր Համալսարանում գործող «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված Ավանդական բժշկության կրթաբլոկի դասընթացներին հատկացված ժամաքանակին, կրեդիտներին, որոնք հաշվի չեն առնվում իրենց երկրներում, հանձնարարեց համալսարանի ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբին վերանայել երկու ֆակուլտետների բարձր կուրսերի (3-6-րդ կուրս) ուսումնական պլանները:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը մասնակցել են այս հարցի շուրջ կապված քննարկումներին, ԳԽ նիստերին:

Հավելենք, որ 2020-2021 ուստարվա 18 շրջանավարտների շրջանում ԱԲՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության մասին անցկացված հարցումներից ևս պարզ էր, որ հարցվածների 27.8%-ն է հետաքրքրված եղել այդ դասընթացներով, 55.6 %-ին չի հետաքրքրել, 11.1 %-ին այն մասամբ է հետաքրքրել, իսկ 5.6 %-ը դժվարացել է պատասխանել:

2020-2021 ուստարվա վերանայված ՄԿԾ-ներում այդ խնդիրն այլևս առկա չէր, քանի որ վերանայելիս հիմք էին ընդունվել ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները, բենչմարքինգի արդյունքները, արտաքին և ներքին շահակիցների առաջարկությունները:

Գործողություն 3. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

Տարվա ընթացքում մեր ուսանողները դեկանի, ամբիոնի վարիչների նախաձեռնությամբ ընդգրկվել են որոշ միջոցառումներում, որոնք եղել են թե՛ ճանաչողական բնույթի, թե՛ ազգային տոների տեսքով: Ազգային տոներին մասնակցելու կապակցությամբ ռեկտորի հրամանով օտարերկրյա ուսանողներին տրվել է ազատ օր: ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից մշտապես խրախուսվել է գեղագիտական միջոցառումների կազմակերպումը, հատկապես, շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը:

Գործողություն 4. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:

Համալսարանում ուսանողների իրազեկվածության ապահովումը իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրում է պարտադիր և շարունակական բնույթ: Ամբիոնները, դեկանատը պարբերաբար կազմակերպում են հանդիպումներ ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Բոլոր ուսանողները համացանցում ունեն ձևավորված խմբեր և բոլոր խնդիրները քննարկվում են կուրսի ավագների և դասախոսների հետ: Անհրաժեշտության դեպքում քննարկումները կազմակերպվում են դեկանի, պրոռեկտորի կամ ուսումնական մասի վարիչի հետ:

2021-2022 ուստարում ՈԱՀ-ի և շահագրգիռ աշխատակիցների կողմից վերանայված Գրադարանի կանոնադրությունը, ՈՒԽ կանոնադրությունը, ՈՒԳԸ կանոնադրությունները ներկայացվել են ուսանողներին և տեղադրվել ԱԲՀ պաշտոնական կայքում:

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Գործողություն 1. Ակտիվացնել տեղական և միջազգային գիտակրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը (ուսանողների փոխանակում, դասախոսների վերապատրաստում, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացում)՝ ապահովելով բուհի ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացումը:

Աստիճանաբար ակտիվանում է գիտակրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը: 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի անմիջական նախաձեռնությամբ, ԱԲՀ Գիտական մասի վերահսկման և աջակցության ներքո Բելառուսի Հանրապետության Գրոդնո քաղաքում կայացավ գիտապրակտիկ միջազգային գիտաժողով՝ «Թթվածին և ազատ ռադիկալներ» խորագրով, որին մասնակցեց նաև ԱԲՀ «Բուժական ֆակուլտետի» 5-րդ կուրսի ուսանող, ԱԲՀ ՈՒԳԸ նախագահ Զիյադ Ջ. Թարիքը և հանդես եկավ գիտական զեկույցով՝ ներկայացնելով “The Possible Role of Inflammation and Oxidative Stress in Development of Premenstrual Syndrome Symptoms: a Review” /«Բորբոքման և օքսիդատիվ սթրեսի հավանական դերը նախադաշտանային համախտանիշի զարգացման մեջ. վերլուծական աշխատություն» վերնագրով հոդվածը:

ԱԲՀ «Բուժական գործ» մասնագիտության 6-րդ կուրսի ուսանողուհի Աֆրոդին Քամիլը մասնակցել է Բուլղարիայի Հանրապետության Սոֆիայի բժշկական համալսարանում կայացած «Ուսանողների և երիտասարդ բժիշկների բժշկական գիտությունների» XX միջազգային կոնգրեսին: ԱԲՀ ուսանողուհու հետազոտական նախագիծը վերաբերում էր անգիոլոգիայի ոլորտին,

որն իրականացվել է ԱԲՀ պրոֆեսորադասախոսական կազմի ղեկավարությամբ (բ.գ.դ. Ռ.Մանվելյան, Ա.Մինասյան և դոկտոր Հ.Ստեփանյան):

Ուսանողների փոխանակում ուսումնաարտադրական պրակտիկայի շրջանակում պլանավորվում է կազմակերպել 2022-2023 ուստարում, այս առումով արդեն նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Գրոդնոյի բժշկական համալսարանի հետ:

Գործողություն 2. Որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ բուհի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով:

ԱԲՀ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, Գիտական մասի վարիչը մշտապես հետաքրքրվում են համալսարանին ռազմավարությանը համապատասխան դրամաշնորհային ծրագրերով, կարծում ենք, անկախ կազմակերպաիրավական ձևից, մեր համալսարանը ևս դրամաշնորհային ծրագրում ընդգրկվելու հնարավորություն կունենա:

6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ չափանիշի վերաբերյալ աշխատանքների մասին */Մասնակցել մրցութային կարգով տրամադրվող հետազոտական դրամաշնորհային ծրագրերին՝ գիտահետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով, գործընկեր բուհերի և գիտաբժշկական կազմակերպությունների հետ կազմակերպել դասավանդման ծրագրեր կամ սեմինարներ, նախաձեռնել ուսանողների և երիտասարդ գիտնականների գիտաժողովների անցկացումը և այլն/* ներկայացվում են Գիտական մասի, Արտաքին կապերի բաժնի տարեկան հաշվետվություններում, ինչպես նաև զեկուցվում ընթացիկ ԳԽ նիստերում:

Հաշվետու տարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորն ակտիվ քայլեր է արել միջազգային գործընկեր հաստատությունների հետ համալսարանի ձեռքբերած կապերն ու հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ: Բացի այդ ՈԱ պատասխանատուների գործառույթն է եղել խթանել այդ աշխատանքների իրականացմանը անհրաժեշտ խորհրդատվություններով, առկա խնդիրների վերհանմամբ և լուծման ուղիների առաջադրմամբ:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գործողություն 1. Վերանայել ԱԲՀ-ի ՈՆԱ քաղաքականությունն ու նպատակները՝ կանոնադրական գործունեությունը և ռազմավարական նպատակները համապատասխանեցնելով վերջիններիս:

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան, որը վերանայվել է 2020 թվականին:

Համալսարանի ռազմավարական ծրագրի նպատակներում հստակ ներկայացվում է բուհի գործունեության տարբեր ոլորտներում նրա շահակիցների ներգրավվածությունը, նրանց դերակատարությունը ՈԱ գործընթացներում: Այս առումով հատկանշական է այն, որ հաշվետու ժամանակահատվածում ՈԱ հանձնաժողովի հետ համատեղ շարունակվել են Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման աշխատանքները: **Հիմք՝ ՈԱ, ՈԱՀ արձանագրություններ**

Գործողություն 2. Մշակել ՈԱ ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները:

ՈԱ քաղաքականությունը գնահատվում է որակի ապահովման համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, հաշվետվությունների քննարկումների հիման վրա: Գնահատման արդյունքում ձևավորվում են վերանայման, բարելավման առաջարկություններ, որոնք հիմնականում ամրագրվում են ԳԽ որոշումներում:

Գործողություն 3. Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ:

ԱԲՀ-ում գործում է ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն. ներքին շահակիցների խնդիրները քննարկվում են կառավարման մարմիններում, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփվում են ամբիոնների նիստերում, գիտական խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են նաև ընթացիկ ստուգումների արդյունքները:

ԱԲՀ-ն իր ներքին և արտաքին շահակիցներին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման միջոցով ապահովում է կապը բուհի և շահակիցների միջև, որի համար կիրառվում են շահակիցների տեղեկացվածության և հաշվետվողականության ապահովման մի քանի մեխանիզմներ՝

- կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները բուհի ղեկավարությանը:
- Համալսարանի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, որտեղ ամփոփվում են տվյալ ուստարում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները: Այն ներկայացվում է Գիտխորհրդին և տեղադրվում բուհի պաշտոնական կայքում:
- 2018-2019 ուստարվանից բուհում ներդրված ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիրը:
- Բուհում բոլոր գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի՝ կանոնակարգերի և ընթացակարգերի, գիտխորհրդի, ռեկտորատի արձանագրությունների ու որոշումների հասանելիությունը բուհի աշխատակիցներին՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով:
- ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջում լուսաբանվող միջոցառումները, հարցազրույցները, ինչպես նաև տեղադրված հայտարարությունները, ուսանողական կյանքին վերաբերող նորությունները:
- info@utm.am էլեկտրոնային փոստի միջոցով հետադարձ կապի ապահովում:
- Համալսարանի գործունեության մասին տեղեկատվության և թափանցիկության միջոց են նաև օրենքով սահմանված կարգով պետական տարբեր մարմիններին ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունները:

Գործողություն 4. Ապահովել ՈԱ գործընթացում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը մասնակցել է ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին՝ նվիրված ուսումնական գործընթացի (ընդունելություն, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողների շրջանում տեղեկատվության բարձրացում) և ներբուհական հարցերի կարգավորմանն ուղղված աշխատանքների բարելավմանը, ինչպես նաև ընդգրկվել է ԿԳՄՍՆ-ի նախաձեռնած բարձրագույն կրթական ծրագրերի լիցենզավորման պայման-պահանջների վերանայման նպատակով ձևավորված աշխատանքային խմբի աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ առաջատար մասնագետը մասնակցել է անգլերենի վերապատրաստման դասընթացների՝ լեզվի իմացությունը բարելավելու նպատակով: Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնի վարիչն ընդգրկվել է ՈԱԱԿ հիմնադրամի կողմից ձևավորված աշխատանքային խմբում՝ մասնագիտության կրթական ծրագրերի համակարգային վերլուծություն իրականացնելու նպատակով:

ՈԱ առաջատար մասնագետը մասնակցել է ՄԿԿՏՀ-ի վերաբերյալ աշխատանքային քննարկմանը՝ ներդրված ծրագրի կիրարկման նպատակով:

ԿԲ և ՈԱ գծով պրոռեկտորը անհրաժեշտության դեպքում խորհրդատվություններ է տրամադրում Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջին, որը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացից հետո վերհանված թերությունների շտկման նպատակով մեծածավալ աշխատանքներ է իրականացնում:

ԱԲՀ ՈԱ պատասխանատուները մշտական կապի մեջ են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի կրթության որակի ապահովման մասնագետների հետ:

ԿԲ և ՈԱ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը հուլիս ամսին գործուղվել են Արցախի Հանրապետություն, ԱՀ քաղծառայողների հերթական վերապատրաստման նպատակով: Գործուղման ընթացքում դասախոսություններ են կարդացել կրթության որակի ապահովման, կրթության որակի վերահսկողության վերաբերյալ:

Գործողություն 9. Մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ գնահատելով որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրված ռեսուրսների բավարարությունը:

Համալսարանը տրամադրում է անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական ռեսուրսներ Որակի ապահովման գործընթացների իրականացման, որակի մշակույթի կայացման համար:

ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունի ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը, որը հաստատում է ՈԱ քաղաքականությունը, ընթացակարգերը, քննարկում է ընթացիկ զեկույցները, տարեկան հաշվետվությունները և առաջարկվող բարելավումների միջոցառումները: Հավելենք, որ հաշվետու ուսումնական տարվա ավարտին ԱԲՀ ռեկտորի կողմից աշխատակիցների աշխատավարձի բարձրացումը միտված էր մարդկային ռեսուրսների խրախուսմանը:

ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող մարդկային, ֆինանսական, ժամանակային և նյութատեխնիկական ռեսուրսները հնարավորություն են ընձեռել դիտարկվող ժամանակահատվածում (2021-2022 թթ.) պլանավորել, իրականացնել մի շարք աշխատանքներ և բարելավումներ, մասնավորապես՝

1. ամբիոնների գործունեության մշտադիտարկում,
2. ամբիոնների հաշվետվությունների վերլուծություն,
3. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերություն-ների վերացման ուղղությամբ աշխատանքներ,
4. ձևավորված հանձնաժողովների, աշխատանքային խմբերի կատարողականների ապահովում, կառավարման մարմինների նիստերի անցկացում,
5. ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություն-ներից ուսանողների բավարարվածության հարցումներ,
6. ստացած կրթությունից բավարարվածության հարցումներ շրջանավարտների շրջանում:

Վերլուծության արդյունքները կքննարկվեն արդեն նոր՝ 2022-2023 ուսումնական տարում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի տարեկան գործունեությունը բխում է համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրից, իրականացվել է ԱԲՀ կազմակերպական կառուց-վածքին և պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներին համապատասխան: Այնուամենայնիվ, հաշվետու ժամանակահատվածում եղել են որոշ գործողություններ, որոնք չեն հաջողվել իրականացնել կամ բարելավել, ինչպիսիք են, օրինակ՝

- շրջանավարտների ուսումնական գործընթացում, ՈԱ գործընթացներում ներգրավման միջոցառումները,
- դասընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ, ինչպես նաև հարցումների կազմակերպման և անցկացման կանոնակարգերով նախատեսված այլ սոց.հարցումներ,
- ՈՆԱ համակարգի և մեխանիզմների բարելավման նպատակով որակի ապահովմանն ուղղված քաղաքականության գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմների կիրառումը,
- ըստ ուսումնական, գիտահետազոտական ծանրաբեռնվածության՝ ՊԴ կազմի աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմների մշակումը,
- դասախոսների վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատա-րելագործման մեխանիզմների նպատակային կիրառումը և այլն:

Այն գործողությունները, որոնք որոշ խնդիրների առկայությամբ պայմանավորված (չնախա-տեսված ընդունելություն, աշխատակիցների ծանրաբեռնվածություն) չեն իրականացվել, կընդգրկվեն հաջորդ ուստարվա առաջնահերթություններում:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր՝ _____ Ա.Գյոզալյան